նը, ընական է, որ հետզհետէ բարեբաւելու պիտի ջանան։ Բայց խիստ դառն է հետեւութիւնը՝ երբ անընդդայնաբար յետին թշուառութիւն մատնուած իւր հոգւոյից եռեւէն կ'երթայ։ Ս. յոյսի կուրութիւն մի այսօր մարդկանց վիճակը այն աստիճան վատթարացուցած է թէ՛ ընտանեկան կեանց մէջ, թէ՛ բարոյական և թէ՛ ընկերական ջրջանի մէջ. որովամեն ուրեք հեթանոսական գործերու սաւեբնեն կը նշմարուին։ Այն դարուց մարդիկ նեարու վիճակը այնչափ ցաւ չ'ազդեր սրտերու, որչափ քրիստոնէական աշխարհի քրիստոնեայ ժողովրդոց անբնական վիճակը։ Ասն զի նոքա մեհենից մէջ պաշտօն կը մատուցանէին. հոն կ'երկրպագէին, մէկ խօսքով նոցա կեանքը և կրօնքը աւելորդապաշտութիւնն էր. բայց այժմ՝ որ իրրու թէ այս ամենուն համար սակաւ մի կրդգանք, ասոնց պատմութիւններն քստմնելով կ'ընթեռնումք, մոռացաց պաշտամունքը մերժած ենք և ամեն ժամու և ամեն բոպէի մէջ կը խոստովանինք թէ՝ մեր սրտի մնուղը Աստուած է, մեր հոգւոյ լոյսը ճշմարտութիւնն է, և մեր ուղղեցողը Յիսուսի պատուիրաններն են։ Յաւալի պատրանք. միթէ՞ առանց գործոց լոկ խոստովանութիւնը անկեղծ է. միթէ՞ առանց գործոց հաւատքը արդար և անկեղծ է։

Արդ՝ 'ի զուր չը խաբենք զմեզ, խոստովանինք, որ վերալից հոգեվարներ ենք, կենդանեոյն մեռեալներ ենք և ջանամք մեր բարոյական ամեն վիլքերը Աստուածի սպեղանիներով բուժել, միայն խօսքով չ'ասենք թէ՝ զՅիսուս կը սիրենք, այլ սիրեմք հոգւով և սրտով. պաշտեմք և երկրպագեմք հոգւով և ճշմարտութեամբ. խոստովանիմք՝ որ բոց 'ի նմանէ ամենայն ինչ ընդունայն է։ Յիսուսի մէջ է միայն մարդկային ազգի միխիթարութիւնը։ Առանց Յիսուսի թշուառ են ընտանիք, թշուառ ազգութիւնք և թագաւորութիւնք։

Գ. Ս. Խ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Վասեմութիւն Գրոց Սրբոց յոպաշ կրթէ զիս. որբութիւն Աստուածային 'ի սիրտ իմ բարբառի։ Աչք 'ի զենին զիմաստասիրաց մատեանս և տեսէք թէ՝ հանդերձ ամենայն պերճութեամբ իւրեանց որչափ նուազեալ գտանին առ սմա։ Միթէ մանրթ ինչ իցէ այս օրինակ վսեմ և իմաստուն մատենիս մարդոյ լինել գործ. և հնարաւոր իցէ արդեօք այնմ՝ զորոյ զպատմութիւնն մեզ յանդիման առնէ. լինիլ մարդ և ևթ։ Միթէ մոլեգնելոյ ուրուք կամ փառասէր ազանդաւորի իցէ այդ ձայն։ Օ՜ մինչ քաղցրութիւն. որպիսի ամբծութիւն 'ի բարս. քանի՞ շնորհ սրբոտառուչ 'ի վարդապետութիւնս. որչափ բարձրութիւն յառաջս. քանի՞ խոր խնամատուութիւն 'ի բանս. որպիսի կորով մտաց. քանի՞ նրբութիւն. որպիսի ճշգրտութիւն 'ի պատասխանիս և որպիսի իշխանութիւն 'ի վերայ կրբոյ։ Աւ՛ր է մարդ, կամ ո՞ւր իմաստուն, որ կարիցէ գործել, կրել և մեռանիլ առանց տկարութեան և առանց անոտի պարծանաց։ Պղատոն 'ի նկարագրելն զիւր արդարն մոտացածին, զնաճկեալն ամենայն նախատանաց մեղաց և զարժանին ամենայն վարձուց առաքինութեան. ըստ ամենայն մատանց զնկարագիր Յիսու.

digitised by A.R.A.R.@

սի Քրիստոսի յանդիմանն կայուցանել և այնչափ 'ի գէպ է նմանութիւն, մինչև ամենայն Հարց Եկեղեցւոյ լինիլ գլուխ, թէ չէ իսկ հնար վերիպել։

Ընդ որպիսի կանխակալ կարծեաց և կուրութեան է գործ՝ բաղդատել զերգին Սոփրոնեայ ընդ Մարմնոյն։ Որպիսի խաչ ընդ այս և ընդ այն։ Սակրատ 'ի մեռանելն անմիջտ և անեղանա՝ կարաց մինչ 'ի վախճան ժամ ունել անձին։ և եթէ այս օրինակ հեշտին մահ ոչ 'ի պատիւ կենաց նորա եղանէր, ապա կարծիք 'ի մէջ անկանէին թէ Սակրատ հանդերձ ամենայն հանճարովն բանաքաղ և եթ էր։ Այսի թէ բարոյականին սա եղեւ գտիչ։ մինչ դեռ այլք յառաջագոյն եդին զայն 'ի գործ։ և սա զարարս նոցին խօսեցաւ և զօրինակս նոցին էառ 'ի վարդապետութիւն։ Զեւ Ճառեալ Սակրատայ զարդարութենէ։ Աքիսիդէս գտաւ արդար։ Լեւոնիդաս 'ի վերայ հայրենեաց վախճանեալ էր։ մինչեւ եդեալ Սակրատայ զհայրենասիրութիւնն 'ի կարգի պարտուց։ Յառաջքան դիւրաւոր նորա զժուժկալութիւն՝ ժուժկալ էր Սպարտա։ և 'ի Յունաստան բազմանային աչք առաքինիք՝ յառաջքան ներբողել նորա զառաքինութիւն։ Այլ առ ո՞ որ յիւրոց անտի ուսաւ արդեօք Յիսուս զվեմն զայն բարոյական և զամբիծ, զորոյ զնարան և զօրինակ ինքն միայն եցոյց յանձին։ եւ 'ի միջոյ անհնարին մոլեռանդութեան՝ բարձրագոյն իմաստութեան ետ բարբառել։ և պարզութիւն երկնային առաքինութեանց պատուեաց զորուպղն ամենայն ժողովրդոց։ Մահ Սակրատայ՝ յիմաստասիրել նորա խաղաղութեամբ ընդ բարեկամս, արդարեւ առ հեշտութեան ամենեցուն է ցանկալի։ Իսկ մահ Յիսուսի՝ որ 'ի կատանս, 'ի նախատինս, 'ի ծանակս, յանէծս ամենայն ժողովրդեան աւանդեաց զՀոգին։ ամենեւին սակաւն և ամենեցուն զարհուրելի։ Սակրատ առեալ զբաժակ թունալից օրհնեաց զգիտասուսակն՝ որ լայր։ Իսկ Յիսուս յանհնարին վիշտս շարշարանաց վասն դատան ոգեալ դահճացն աղօթեաց։ Այո, եթէ կեանք և մահ Սակրատայ են առն իմաստասիրի։ կեանք և մահ Յիսուսի են Աստուծոյ և եթ։

Յ. Յ. ԻՈՒՍՕ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՀՏՕՆԵՒՑ ՈՒՂՂՈՒԱԾ(*)

ՀԱՐՔ ԻՄ ԵՒ ԵՂԲԱՐՔ, ՊԱՀՏՕՆԱԿԻՑՔ ԻՄ Ի ՔՐԻՍՏՈՍ

Ամենայն խանարհութեամբ և սիրով Հոգւոյն կ'ապաչեմ և արտասուօք կը խնդրեմ, շնորհք ըրէք, կարդալու արժանի համարեցէք ձեր յետին պաշտօնակցին այս տկար խօսքերը, որք կարեւէր խոցուած սրտէ մը կը բղխին և որք, եթէ սիրով և առանց արհամարհանաց ընդունուին յուսամ Աստուած թէ օգտակար կը լինին։

Գիտեմ և կը խոստովանիմ, որ ձեզմէ շատերը հմուտ էք ամենայնի, և կարօտ չէք ուրիշէն ազդարարու թեան կամ առաջարկութեան։ Թերեւս ձեր հմտութեամբ խոտելի երեւին իմ դուք նաքեայ տկար ու անհամ խօսքերս, սակայն շնորհք մի է՝ զոր կը խնդրեմ. կարդացէք զայս և մի համարիք թէ ուսուցանելու համար կը գրեմ, այլ արդէն գիտցածնիդ թէ ձեզ և թէ

(*) Եկեղեցւոյ պաշտօնեայ բանով կը հասկնանք ամէն աստիճանի Եկեղեցականք։ փոխանակ գպիրն սկսեալ մինչեւ ցկաթողիկոս։

digitised by A.R.A.R.@